ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 26-ին ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը՝ ընկերակցությամբ ամերիկահայ ծանոթ մտավորական դոկտ. Կարապետ Կարապետյանի:

Դեպի Մայր Աթոռ իր ուխտավորության ճանապարհին տ. Թորգոմ արքեպիսկոպոսը սեպտեմբերի 17-ին այցելում է Բուխարեստ Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի սիրալիր հրավերով:

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցին, ուր երկու սրբազանները բարիգալստյան և ողջույնի ջերմ հառեր են փոխանակում:

Այնուհետև տ. Թորգոմ սրբազանը տ. Տիրայր սրբազանի ընկերակցությամբ պաշտոնական այցելություն է տալիս Ռումինիայի Պատրիարք Նորին Սրբություն Ժուստինիանին: Նորին Սրբության և հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների միջև տեղի է ունենում ջերմ զրույց, սրտագին մթնոլորտում:

Նույն օրերին տ. Թորգոմ և տ. Տիրայր սրբազանները այցելություն են տալիս Ռումինիայի կրոնական գործերի պարոն նախարարին և սիրալիր զրույց ունենում նրա հետ:

Սեպտեմբերի 20-ին տ. Թորգոմ սրբազանը, ընկերակցությամբ դոկտ. Կ. Կարապետյանի, հրաժեշտ է առնում Բուխարեստից և սեպտեմբերի 26-ին Մոսկվայի վրայով ժամանում Մայր Աթոռ:

Մայր տաճարում սրբազանը և դոկտ. Կարապետյանը իրենց ուխտն ու աղոթքը անելուց հետո ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ Նրա օրհնությունը ստանալու:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը և դոկտ. Կ. Կարապետյանը, Կարպիս սրկ. Գալբատյանի ուղեկցությամբ, այցելում են ս. Գեղարդ, Կեչառիս, Հաղարծին, Գոշավանք, Սանահին, Հաղպատ, Օձուն, Հառիճ, Մարմաշեն, Սալմոսավանք, Օհանավանք, Մուղնու ս. Գևորգ, Օշական, Խորվիրապ և այլ եկեղեցիներ ու պատմական հուշարձաններ:

Տ. Թորգոմ սրբազանը և պարոն Կարապետյանը հոկտեմբերի 1-ին մասնակցում են

Վեհափառ Հայրապետի գահակալության 17-րդ տարեդարձի հանդիսությանը: Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին սույն երջանիկ առիթով՝ ներկայացնելով իր ողջ թեմի հավատացյալ ժողովրդի որդիական ջերմ սերը, երախտագիտությունը և հավատարմությունը Մայր Աթոռին և ազգիս Վեհափառ Հայրապետին:

Սեպտեմբերի 6-ին տ. Թորգոմ սրբազանը և դոկտ. Կարապետյանը մասնակցում են Բյուրականի «Հայկաշէն» ամառային Վեհարանի հանդիսավոր բացմանը, որի ընթացքում Թորգոմ սրբազանը շնորհավորում է Վեհափառ Հայրապետին՝ վեր հանելով իր թեմից ազգային բարերար Հայկ և Ալիս Գալվուքճյանների եկեղեցանվեր, կրթական ու հայրենասիրական գործունեությունը:

Հոկտեմբերի 10-ին տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և դոկտ. Կարապետ Կարապետյանը լավագույն տպավորություններով հրաժեշտ են առնում Վեհափառ Հայրապետից և մեկնում ԱՄՆ:

Ռումինիայի Պատրիարք Ն. Ս. Ժուստինիանը, տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, տ. Տիրայր եպս. Մարտիկյանը և դոկտ. Կ. Կարապետյանը ռումին պատրիարքարանում. Բուխարեստ